


ԿՈՅՍ ԱՆԱՐՈՍ ՅՂԱՅԵԱԼ
LA VIERGE IMMACULÉE.



ԿՈՒՍԱԿԱՆ ՔՆԱՐ

ԱՂԱԲԻՒՄ ՅՈՐԴԱՆԱՍ

Ո՛հ, ես ըլլամ ոտքերուդ տակ այգեստան,
Ըլլամ շուշան հովիտներու ըստուերոտ,
Եւ դուն, ո՛վ Մայր, անցնիս սրտէս այնքան մօտ
Որ բողբոջին յանկարծ տենչերըս խոսպան:

Եւ ես ըլլամ շուրջըդ սրտող ծաղիկներ
Յօրեանի արտ, խընծիղներով հասկածուռ,
Եւ Եդեմէն դու վար իջնես, ջինջ աղբււր՝
Ջըրարբէլու ծարաւ հոգիս սիրաջեր:

Լըսեմ յաւէտ կարկաջանքիդ շարական
Շընորհքիդ հետ պարտէզին մէջը սրտիս,
Ես խոնջ ճամբորդ չորս ծագերէն աշխարհիս,

Ըմպեմ անյագ սրտիդ ակէն մայրական,
Եւ թեւերուդ զով շուքին տակ խանդակած՝
Երգեմ գարունս աղբււրիդ քով յորդառատ:

ԲԱՐՈՒՆԱԿ ՅԱՂԱՅԵԱԼ

Այս մեր գարնան, մեր օրերուն արեւոտ
Դուն ես հիմա ճերմակ ծաղիկ ծիրանի,
Ու կը հանգչի թեւերուդ վրայ առաւօտ
Կուսութեանդ պէս, լոյս՝ մեր լոյսէն աւելի:

Մեր տենչերուն, ինչպէս տանիք ըսպիտակ՝
Երկինք ես միշտ, և պատմութեանդ՝ ամպ ոսկի:
Չունիս ըստուեր, այլ շափելոյ անապակ,
Ուսկից Արեւն աստուածօրէն կը հոսի:

Եւ ուղեցիր, ո՛վ Տիրամայր, որ մարդիկ
Գան թառելու երամ՝ երամ թեւերուդ,
Քաղեն շողեր, հաւաքեն սերըդ ծաղիկ,
Պըսակուելու յարութեան օրը Որդւոյդ:

Ո՛հ դու չունիս երբեք աղիւտը կղանակ
Այլ միշտ գարուն և միշտ ծաղիկաւ բարունակ:

ԱՅԳԻ ՎԱՅԵԼՈՒՉ

Յանկապատած սիրաւ մուրաի փուշերով
Ես այգեպան անպատմելի տենչերուս,
Քու անունովդ, հոն կը տընկեմ յոյս, գորով,
Ո՛վ Մարիամ, եղբր վըրան արշալոյս:

Ոտքերուդ տակ պիտի սփռեմ ես վարդեր
Արիւնի գոյն, գոյն ցնծութեան տօնական,
Ա՛հ, Տիրամայր, առ, քու Որդիդ զերդ լապտեր
Կոյս ծոցիդ մէջ արեւ ըլլայ մեր վըրան:

Դու չես կըրնար չըլիլ առանց Յիսուսի.
Այցելէ, Մայր, աշունի մօտ իմ այգիս,
Պիտի կապեմ մէջքիդ յոյսերըս գօտի,

Այցելէ Մայր ձմրան հասած իմ այգիս:
Եւ երբ քաղեմ միրգեր հասուն և բուրեան,
Պիտի շարեմ գլխուդ պըսակ պատուական:

ՍԱՓՈՐ ՈՍԿԵՂԷՆ

Այդ սափորին ոսկեղէն
Կաթն ես ըմպեմ կուսական,
Ու մանկանամ ես նորէն
Ինչպէս գրկիդ Երեխան:

Գիտեմ թէ հոն կը պաչես,
Խեփորն ինչպէս մարգարիտն,
Նշխարը սուրբ ձիւնի պէս
Եւ ողկոյզի ոսկի շիթ:

Արեւի պէս ամէն օր
Կը պարպուիս անըսպառ,
Միշտ արշալոյս կաթնածոր,

Եւ միշտ սափոր սիրավառ:
Ո՛հ, դուն հոսէ, հոսէ, Կոյս,
Այդ սափորէն կաթ և լոյս:

ՅՈՂ ՔԱՂՅՐԱԾԱԽԱԼ

Այս առաւօտ ես դաշտ ելայ
Շուշաններուն այցելու,
Այնտեղ ոսկի շիթեր տեսայ,
Շիթեր նման աստղերու:

Ու Մաքրութիւնն՝ իբրեւ եղեամ՝
Հոն քաղցրօրէն ծաւալուն,
Կարծես ճերմակ քօլն էր, Մարիամ,
Քու Մայրութեանդ օրերուն:

Ամէնուրեք տեսայ ժըպիտ
Աչքերու պէս արաոյտի,
Տեսայ պատկերը Մանուկիդ

Ամէն ցօղի մէջ վըճիտ.
Եւ հոն տեսայ քեզ Տիրամայր
Ծընորհաբեր ամպ ոսկեծայր:

ՄԱՔՈՒՄ ԱՂԱՅԵԱԼ

Հրեշտակներուն և սուրբերուն համօրէն
Երամին մէջ ոսկեփետուր աղանի,
Մեր ժամերուն ցնծութեան մէջ լուսեղէն
Խորհրդական մեռնաբոյր աղանի:

Տապանակին շուրջը սրտող լոյս զըւարթ,
Ուր թեւերուդ սուրբ հպումով կը վառին
Հաղար ջահեր, հաղար տենչեր խանդակած,
Մեր աղօթքներն երկինք տանող աղանին:

Կուրծքիդ վըրան դուն լուսատիպ կը կըրես
Բանն Աստուծոյ՝ առաւակն ինչպէս ցոլքն ոսկի,
Ու ժողվելով տենչ և աղօթք աշխարհէս՝

Կը յօրինես քեզի թեւեր ծիրանի,
Թեւեր որոնք երկինքի պէս անսահման
Կը կապուանան, կը կապուանան մեր վըրան:

ԱՄՊ ՀՈՎԱՆԱԽՈՐ

Սին օրերու խօլ տենչերով տօթակէզ
Քու հովանիդ կը փնտռեմ,
Առանց գարնան անձրեւներու դաշտ եմ ես.
Երկնային ամպ, ծարաւ եմ:

Իջիր վըրաս ծիածանի մէջ պարփակ,
Ինչպէս վըրան սընդուսէ,
Եւ ես բացուիմ ծիւ մը մատղաշ թեւիդ տակ
Հեռու այրող խորշակէ:

Այնպէս ինչպէս կոյս ծոցիդ մէջ կը պաչես
Խարտեաշ Մանուկդ յաւիտեան,
Վարդ ամպ եղբր՝ որ իմ աչքերս ալ ծածկես
Թովչանքներէն մեղսական.
Ու շուքիդ տակ ապրիմ մանուկ քաղցրութեամբ,
Հովանաւոր ճերմակ ամպ:

ԱՅՍՈՐ ՅԼԾԱՆ ԵՐԿՆԱՅԻՆԲ

Աղուոր, աղուոր, աղուոր ծաղիկ Եդեմի
Չորս գետերու եղբրքին.
Աղուոր ժըպիտ, աղուոր ծաղիկ և լոյսի
Երանութեան Յիսուսի:

Աղուոր, աղուոր, աղուոր հըրաշք Անմահին
Ըստեղծագործ օրերուն,
Երբ քեզ պարզեց զերդ առագաստ երկինքին
Գեղեցկութիւն իր սիրոյն:

Քերովբէներ, Սերովբէներ միաձայն
Շուրջը յաւէտ կը պարեն,
Աղուոր լուսին, աղուոր արեւ աննըման
Թագ Յիսուսի լուսեղէն:
Ամէնուրեք և ամէն ժամ սիրելի,
Աղուոր, Աղուոր Տիրուհի:

ԱՐԵՎԵԼԻՔ ԱՐԵՎԱԿԱՆ

Ուսկից կու գայ այս արփին,
Աստուածային չըսումով,
Լիճերն ոսկի կը փոխուին,
Կը լեցուի վարդն երազով:

Եւ շուրջն հազար պարունակ
Ծիածանի գոյներու,
Թեւերուն մէջ ամրափակ
Մանուկ մ'ունի սիրելու:

Հազար ճաճանչ, հազար շող
Ամենուրեք կը սփռին,
Եւ իր ծոցին մէջ ծագող

Արեւէքն է Արեւին:
Եւ նա կոյսի գէմք ունի,
Աչքեր ունի Մայիսի:

ԱՅՍՈՐ ԱՍՏԵՂԻՔ...

Տասներկու հատ լուսամբիւ,
Խոշոր աստղեր տասներկու.
Տիրամօր քով ծնրագիր
Արեգակներ են հըլու:

Ու լոկ գիտեն պըսպըղաւ,
Ճաճանչելով աղօթել,
Զերդ բուրվառի բոցն օրհնեալ՝
Միշտ մերձենալ ու սիրել:

Լոյս են լոյսին հետ յաւերժ
Եւ կոյս գէմքի շրջանակ,
Կարծես սիրոյ նոր ջրվէժ

Ամէն կաթիլ հըրեշտակ:
Տասներկու են լուսամբիւ
Տիրամօր քով ծնրագիր:

ԱՆԱՐԱՏ ԿՈՅՍ...

Շարականի պարտեզին մէջ քեզ տեսայ
Արշալոյսին բացուած շուշան ցօղածոյր.
Այնտեղ ես միշտ ինչպէս սրտին մէջ շընորհ,
Եւ կուսուծիւն շուրջն անարատ շափելոյ:

Այնտեղ ես միշտ մեր ժամերուն զերդ երկին,
Որուն՝ սէրն է անծայրածիր պարունակ,
Ու մայրօրէն գրկած ես միշտ Արեգակն,
Այն՝ որ Աստուած և որդիք է Միածին:

Ու կ'անձրեւես գէմքէդ ցուրբեր կաթնորակ,
Ամէն շիթ՝ սէր, ամէն կայլակ սըրբութիւն.
Դուն ես Մայիսն այս անձկաւէտ օրերուն,

Որուն վարդերն աղօթք են ու սուրբ փափաք:
Ո՛հ, ցօղէ մեզ կուսուծենէդ կաթնահամ
Անարատ կոյս Աստուածածին Մարիամ:

ՈՂՋՈՅՆ ՔԵԶ

Երեկոյեան զանգերուն հետ դաշնաւոր,
Եւ ծիրանի գոյներու մէջ ոսկեթեւ,
Կը տարածուի յուշիկ նըւադ մը թեթեւ
Լարին վըրայ անուն մը սուրբ և աղուոր:

Աստուածամայր, Աստուածամայր, ողջոյն քեզ:

Եւ աղբիւրներ աղբիւրներու արձագանգ,
Անտառներու սօսափիւններ մեղմօրօր
Զայն կը կրկնեն, ու կ'երեքնեն միանուագ
Անուն մը նոր, անուն վարդի պէս բոսոր:

Աստուածամայր, Աստուածամայր, ողջոյն քեզ:

Յուրբեր կ'իշխան ջուրերու ջինջ երեսին,
Կը նըկարեն անուն մը կոյս ոսկեթեւ,
Որ ամէն օր համբուրելու գայ արփին,
Անուն մը հեշտ, ամէն սըրտի հետ ընտել:

Աստուածամայր, Աստուածամայր, ողջոյն քեզ:

Շաղերու մէջ և վարդերու երեսին
Սէրն առանձին անունն մ'ունի ոսկեծիր,
Անուն այնպէս նըման գարնան ժըպիտին,
Որ կը թըւի իրերու երգ սիրաւիր:

Աստուածամայր, Աստուածամայր, ողջոյն քեզ:

Աստուածամայր, Աստուածամայր, ողջոյն քեզ
Աստղերու մէջ, մէջը նարօտ ամպերուն,
Մանուկներու աչքերուն մէջ սիրակէզ
Համայնական և վիշաւերու խորն անհուն:

Աստուածամայր, Աստուածամայր, ողջոյն քեզ:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

Հալէպ, 27 փետրուար. 1954



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ԵՒ Ս. ԿՈՅՍԸ

Վանի ծովափին ափերուն, բլրակի մը վրայ գեռ մինչեւ 1800-ի վերջերը(1) կանգնած էր Նարեկի վանքը: Ան բազմաթիւ դարերէ ի վեր կը դիտէր ծովափին ալէկոծ ջուրերը եւ անոր վրայ տառանդ նաւակները՝ պատկերը մեր աղբիւն տխուր պատմութեան, որուն այդ վանքն ալ իր բարձունքէն եղած էր փարոս մը, ինչպէս լճակին մէջ նաւաբեկած լաստերուն:

Այդ փարոսին ոտքին առջեւ եկած փըշ-րուած են կոհակները խռովայոյզ ջուրե-րուն եւ մարդկային ցաւերուն, լեցնելով իրենց աղաղակովը անոր աղօթական կա-մարները. եւ ան այդ փոթորկոտ ծովափին ու պատմութեան մթութիւններուն խառ-նելով իր լոյսի շողերը, եղած է հաւատա-րիմ արձագանգն անոնց եւ մթաստուեր-ներու մէջ ընկղմած՝ խօսուն վկայ մը հայ անցեալին:

Հոն է որ ծնունդ առած է խոնարհ վա-նական մը, Գրիգոր Նարեկացին, որուն մէջ ցոլանալով այս ամէնը, ամփոփեր է իր մէջ բոլոր «խոկումները որ հայ միտքը ունեցեր է բնաւ, բոլոր պայքարներն ու տաղանապնդը, ինչպէս նաեւ յաղթանակ-ներն ու յոյսերը» հայ ցեղին, ներկայա-ցընելով եւ անմահացնելով հարազատ հա-յը իր բնորոշիչ նկարագրով:

Սուրբ մը որ թէպէտ անմեքձենալի եւ խորհրդաւոր մթութիւններով շրջապա-ռած, զարմանալիօրէն կրցած է ժողո-վըրդականանալ, դիւթանքով մը դրաւ-լով հայուն սիրտը, որ պաշտած է զայն

առանց հասկնալու զինքը եւ առանց դիտ-նալու թէ ինչո՛ւ: Անշուշտ որովհետեւ սուրբ էր մեր Նարեկացին. որովհետեւ մարտիրոս ժողովուրդ մը չկարենալով բաւականանալ լոկ երկրաւոր հայրենի-քով, ունեցած է ծարաւ երկնքի. եւ այս իր հոգին հաւատարմօրէն ցոլացած տես-նելով Նարեկացիի տառապանքներուն եւ տենդոտ երկնաւայ ձկտումներուն մէջ, իր սրտին քնարին պէս սիրած է ու փարած անոր:

Այդ երկնքին մէջ սակայն, որուն կը ձկտէր հայ աղբը, գրուած էր նաեւ հա-յուն ճակատագիրը. ճակատագիր մը մութ եւ սքողուած, բայց միշտ անդորրացած Տիրամօր կուսական աստղին պիտիարար նշոյլներով, որուն ամէն հայու հոգին ե-ղած է հայելի մը յոյսի եւ սիրոյ կայծ-կըլտուքներով, ամէն հայու սիրտը ունե-ցած է ճիշ մը անոր համար, ամէն էջ մեր շարականներուն երգ մը իրրեւ դրուատիք եւ իր Նարեկացիին մէջ անոր գերազոյն վարդապետը եւ սերօրէն:

Հոս պիտի նկատենք նախ՝ թէ ինչ ե-ղած է Ս. Կոյսը Նարեկացիի անձին հա-մար. երկրորդ՝ թէ ո՛վ է նա Նարեկացիին համաձայն, ո՛րքան զեղեցիկ եւ ինչպիսի առանձնաշնորհութիւններով Աստուծմէ զարդարուած, եւ իր այս առանձնաշնոր-հութիւններուն հետեւանքով մարդկու-թեան ճակատագրին մէջ ինչ դերք կը բռնէ: Հուսկ համառօտ խորհրդածու-թեամբ պիտի փակենք մեր տողերը:

* * *

Յիշատի չէր կրնար անհունին համար ստեղծուած սիրտ մը համակամիլ այս եր-կրի թշուառութիւններուն, թշուառ մա-նաւանդ անդենականի անստուգութեամբ:

(1) Հմմտ. Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներտիկ, Ս. Ղազար, 1864, Հ. Ներսէս Սաադիսեանի, որ ճամբորդելով հայկական դա-ւառները՝ սրբանուէր աւերակներն ալ այցելել է, թողլով մեզի անոնց շուրջ անգին տեղագրական-ներ: